



126. ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱԴ ՈՒ ՔՅԱՉԱԼ ՕՍՄԱՆ

Թուրքեր ղրաղղադ շորս դիեն կը փաթին, հուջում կիտան վըր բերդերուն: Սուլթան Մուրադ դարվեջի խըրխով մըջ օրդուչին կէղնի, կը տեսնա, օր ինչ խըղար հուջում կիտան՝ քաղաք շառնըվի: Դարվեջ կը մոտենա Քյաչալ Օսմանին:

— Քյաչա՛լ,— կըսե,— խելքդի ի՞նչ կը կտրե, սուլթան Մուրադ ղրաղղադ կոնա՞ առնե:

Քյաչալ Օսման կըսե.

— Ես՝ անոթի, ձիս՝ անոթի. անոթի փորով Բաղղադ կառնվի՞, դարվե՛ջ:

Դարվեջ կը հեռենա: Օլոր օր ասքըրի բաժին ու ձիանու կեր հմալ գեվելցուն, օր կուտին, կես լե գեվելնա: Վիր չոտնաման շկեր, չոտնաման տվին, վիր շոր շկեր, շոր տվին, փարին՝ էլ հատ ու հըսաբ շկեր: Քանի մե օր չետե դարվեջ Քյաչալ Օսմանին կը գտնա, կը հարցու.

— Քյաչա՛լ, ի՞նչ կըսիս, սուլթան Մուրադ ղրաղղադ կոնա՞ առնե:

— Ա՛յ հա՛յ,— կըսե Քյաչալ Օսման,— տնաշե՛ն, բա՛ն ըսիր: Ես կուշտ, ձիս՝ կուշտ, ղրաղղադ չէ, ղրասրան լե կառնե:

Քանի մե օր չետե Բաղղադ սուլթան Մուրադի ձեռն էր, նստուկ խալիֆներու քոշկ ու սարեն՝ կուտեր, կը խմեր ու մեկ-մեկ միտ կը բերեր Քյաչալ Օսմանին, օր էդ խըղար խելքի ու հունարի տեր էր: